



Հակոբ Պարոնյան

Պտոյտ մը Պօլսոյ թաղերու մէջ

ԻԱ, ԻԲ, ԻԳ

ԻԱ.

ՊՕՅԱՃԻ ԳԻԻՂ

Այս գիւղին ազգայինները ժամանակաւ այնչափ կքնանային, որ շատ մը բժիշկներ իրենց չքնացող հիւանդները հոս կղրկէին: Ոմանք ալ կայնդէին, թէ Եպիմենիդէսը հոս ծնած ըլլայ: Չհաւատալու բան չկայ. իրենց շատ քնանալուն ամենահզօր մէկ փաստն ալ այս էր, որ հոն բնաւ թաղականի կռիւ լսուած չէր. եթէ չքնանային՝ կարելի՞ էր միթէ որ կռիւ չհանէին եւ իրենց աղաղակներովն լրագիրներու էջերը շլեցնէին :

Բայց քանի մը ժամանակէ ի վեր այս գիւղն արթնցած է շնորհիւ երիտասարդութեան, որ ընկերութիւն մը հաստատած է՝ գիւղին վարժարանը յառաջ տանելու համար եւ որ վերջերս իր հաշուեցուցակն ալ հրատարակած է :

Գիւղիս հայերը շատ ուժեղ ստամոքս ունին. անոնց իրաքանջիւրն ոչխար մը կարող է ուտել եթէ ուրիշի մը տունը ճաշի հրավեր ուի: Համեղ կերակուրներէն աւելի կախորժին քան թէ խօսարաններէն եւ լսարաններէն :

Պոյեաճի գիւղցին շատ կսիրէ իր անունը փոխել: Կարապետը Քարլօ եւ Մկրտիչը Պաթիսք կ'ըլլան հոն: Շաբաթ մը ետքը նորէն կփոխուին անոնք եւ Ժան կամ Բօլ կ'ըլլան, եւ մարդս կստիպուի ամեն շաբթու առաջին օրն իր

բարեկամն հարցունել :

Այսօրուան անունդ ի՞նչ է :

Ժօզէֆ : Քուկի՞նդ :

Մարթէն :

Ջուարճութիւնը շատ կսիրեն, ամիս մը շարունակ կրնան ուտել, խմել եւ երգել, առանց ամենափոքր անհանգստութեան մը զգալու :

Հոս սա աղէկութիւնը կայ, որ իրարու միս չեն ուտեր եւ իրարու հետ շատ սիրով են: Եթէ երբեմն պատահի իրարու հետ վեճի բռնուիլ՝ քառորդէ մը կհաշտուին եւ դրսէն բնաւ միջամտութիւն չեն ընդունիր, իրենց անկախութիւնը պաշտպանելու համար: Ասոնք ընդհանրապէս այնչափ իրարու քիթ մտնելով կխօսակցին, որ հեռուանց տեսնողն կկարծէ, թէ իրենց խօսակցութիւնը քթի վրայ է :

Կիներէն ոմանք թէպէտ եւ իրենց անունները չեն փոխեր, բայց այնչափ կփոխեն կերպարանքն, որ ցերեկին չես ճանաչեր այն կինն, զոր առաւօտուն տեսած ես, ոչ ալ երեկոյին կճանաչես այն աղջիկն, զոր ցերեկին տեսած ես:

Միօրինակութիւնն այս գիւղին մէջ շատ ձանձրութիւն կպատճառէ, եւ մենք կգարմանանք, որ Պօյաճի գիւղցին ի՞նչպէս կը համբերէ եւ շաբաթը անգամ մը տուն չփոխեր: Խնդրենք Աստուծմէ, որ այս մոլութիւնն թաղականներուն եւ վարժարանը կառավարող անձերուն վրայ չգործադրուի:

Իգական սեռն շատ կսիրէ ճաշակով հագուիլը եւ ճաշակով բամբասելը :

Ամառուան եղանակին մէջ շատ տեղերէ կու գան հոս օդափոխութեան համար: Ժամանակաւ ուխտի կ'երթային, հիմա միայն օդափոխութեան կ'երթան :

Գիւղիս հայ տուներուն թիւը ճիշտ չգիտցուի, բայց վաթսունի եւ եօթանասունի մէջ տեղը կկարծուի :

Օդը խիստ է, այսինքն միապետական է, իսկ բնակիչները մեղմ են :

Գիղիս անունն ունանք կենթադրեն, թե ատենօք կիները հոս պոյա ներ կշինեն եւ իրենց երեսներուն, մագերուն եւ աշերուն կը քսեն եղեր: Ես ենթադրութեամբ ուրիշներուն մեղքն առնելու կը վախնամ:

ԻԲ.

ՂԱԼԱԹԻԱ

Ղալաթիոյ սահմանն է հարաւէն քսակահատներ, արեւելքէն գինովներ, հիւսիսէն ոճրագործներ եւ արեւմուտքէն երգիչ աղջիկներ :

Դրամի կողմէն սահման չունի. մոլութիւններու մասին անսահման է :

Դաշտի վրայ շինուած ըլլալով՝ ամառը գրեթէ միշտ ցամաք է. իսկ ձմեռը՝ թաղիս երեք քառորդը ծով կդառնայ եւ մէկ քառորդը ցամաք կմնայ: Այս թաղը երկու տեղագրութիւն ունի, մին ամառուան եւ միւսը ձմեռուան. ամառուան տեղագրութիւնն առաջնորդ բռնելով եթէ ձմեռն այս թաղին մէջ պտըտիլ ուզես՝ ջուրերու մէջ կխողդուիս. իսկ եթէ ձմեռուանովն ամառ ատեն հոս շրջագայիս՝ նաւը ցամաքը կնստի: Արդ մեծ զգուշութեամբ քալելու ես այս թաղին մէջ, որպէսզի վտանգի մը մէջ չիյնաս :

Գլխաւոր լեռն է Ղալաթիոյ աշտարակը, որ Բաբելոնի աշտարակ ալ կրնայ կոչուիլ՝ երբ քաղաքական տեսակէտով նայուի հոն: Հրդեհի նշանը կտրուի միշտ այս լեռնէն, որուն գագաթը ձիւն չգտնուիր բնաւ այլ միայն կրակ, եւ ասոր համար հրաբուխ լեռ ալ կկոչուի :

Ջերմուկներն են գինետուններն, որոնց մէջ մարդ չափէն աւելի կքրտնի: Հանքային ջուրերն են. ապսենթ, մասթիքա, քօնեաք եւ այլն: Գլխաւոր ջերմուկն է Քօմիսիօն խանը, ուր քօնսօլիտի վրայ գործ կլինի: Ամենէն աւելի քրտնցնող ջերմուկն է այս, որուն մէջ շատերը կմտնեն ուժ առնելու համար, եւ ուժաթափ դուրս կելնեն անկէ :

Թաղիս ամենէն մեծ ճանքան այն է, որ ուղղակի մինչեւ Միջագիղ կտանի, եթէ թրանվէյ ի կառքերուն մէկուն տակը չմնայ մարդ :

Կրօնքը շատ է գործածականը յայտնի չէ :

Բնակիչն է խաղամուրօթին. թին որոշ չգիտցուիր :

Թաղիս օդը բնաւ կարեւորութիւն չունի. ամենքը կյարգեն Քօմիսիօն խան ին օդը, որ շատերուն կը վնասէ եւ սակայն ամենուն ալ սիրելի է :

Թաղիս մէջ բնիկ հագի քսանըհինգ կամ երեսուն տուն կայ Հայո: Պանդուխտ եղբայրներն, որք ստորերկրեայ տեղեր կբնակին հոս՝ ամեն կիրակի օրերը թաղին եկեղեցին կ'երթան եւ գանձանակներուն ստակ կը ձգեն: Եթէ թաղեցիներուն մնար՝ շատուց ծախուած էր եկեղեցին, որ այսօր շատ եկամուտներ ունի :

Այս եկեղեցոյն թաղական խորհրդարանին մէջն էր ժամանակաւ Ղալաթիոյ օճախը : Այս եկեղեցոյն մէջ կ'ըլլան ազգային Երեսփոխանական Ժողովոյ նիստերն, որք ամեն արժանիք ունին Ղալաթիոյ աշտարակին մէջ տեղի ունենալու :

Հոս բարձրացած է Կենդրոնական վարժարանն, որ դեռ բացուած չէ :

Ղալաթիացին տասներկու տարիներէ ի վեր կփափաքէր վար առնելու իր թաղականն, որ ազգային շահերուն ջերմ պաշտպան ըլլալով՝ չէր թողոր, որ քիչ մ'ատեն ալ ուրիշները թաղականութիւն ընեն եւ խնդան. իսկ այս տարին թաղեցին յաջողեցաւ հրաժարեցնել իր թաղականն, որ լալով հեռացաւ խորհրդարանէն: Ընտրուեցաւ ուրիշ թաղական խորհուրդ մը, որուն անդամներուն մէջ անշահասէր մարդիկ կգտնուին, սակայն ասոնք ալ դասատուներու փոփոխութիւնը շատ կը սիրեն եւ գրեթէ շաբաթ չանցնիր, որ առանց պատճառի դասատու չփոխեն :

Հոս է կենդրոնական թանգարանն, որ ըստ ծանուցման՝ շաբաթն երեք օր բաց է եւ ըստ իրողութեան՝ շաբաթը ժամ մը միայն բաց է՝ սիկատա խմել ուզողներուն :

Այս թաղն է Միացեալ ընկերութեանց գրասենեակն, որ երկու ամսուան մէջ երկու գործադիր ժողով տեսնելու պատիւն ունեցաւ: Աստուած երրորդէն պահէ :

Վերջապէս այս թաղն կենդրոնական ըլլալով՝ շատ դիրութիւններ կու տայ մեզի՝
հոն երթալու եւ շաբաթը քանի մը անգամ ազգային խնդիրներու վրայ կռիւներ
յարուցանելու :

ԻԳ.

ՂՈՒԲՈՒՉԷՇՄԷ

Այս գիտին Գուրուշէշմէ կոչուելուն պատճառն են գեղին աղբիւրներն, որ բնաւ
չեն վազեր :

Գեղացին աղբիւրը կշինէ, բայց անոր ջուր բերելու հոգ չըներ:

Միայն աղբիւրներուն հետ չէ որ այսպէս կը վարուի. իր վարժարանին եւ
եկեղեցոյն հետ ալ նոյն ընթացքն ունի :

Այս գիտին ազգայիններն այնքան կաշխատին եկեղեցոյն պայծառութեանը, որ
անցեալները եկեղեցոյն մէջ շաբաթ մը կաթիլ մը եղ չկար: Երբ քահանան
իմացուց իրենց, թէ եղը հատեր է՝ ասոնք շրճարանի մը մէջ հաւաքուեցան՝
խորհրդակցելու համար :

Ի՞նչ կ'ըսէք, եղբայրներ, եկեղեցոյ եղը հատեր է :

Ի՞նչ կ'ըլլայ եղեր, թող առանց եղի կատարուին արարողութիւնները :

Ես ալ համակարծիք եմ. արարողութիւնն առանց եղի ալ կ'ըլլայ :

Ցերեկ ատեն կանթեղ վառելն ի՞նչ նշանակութիւն ունի :

Շոայլութիւն է, շոայլութիւն :

Մեր քահանան ալ այլանդակ մարդ մ'է, Գիողիմէսի պէս ցերեկ ատեն կանթեղ
կը վառէ :

Առաւօտները մութուն կսկսի եկեղեցին, եւ անպատճառ լոյս պէտք է :

Լուսնի լուսովը թող կարդայ :

Եւ վերջապէս որոշում կտրուի, որ քահանան քիչ մը տնտեսագիտական օրէնքներով վարուի :

Վարժարանին գալով՝ Գուրուշէշմէցին դասատու կբերէ, բայց ամսական չտար: Շատ դասատուներ մինչեւ այսօր թաղական խորհրդարանը կ' երթան իրենց մնացած ամսականներն ուզելու համար եւ չառնելու համար :

Կիրքն այս գեղացիներուն մէջ չափազանց ըլլալու է, որ իրենց մէջ համաձայնութիւն գոյացնելն միշտ անկարելի եղած է :

Հոս երեսուն ~ քառասուն տուն կայ Հայու. եթէ ութսուն տուն ըլլար՝ ամեն օր նոր կռիւներ պիտի ծագէին :

Կիներն այրերէն աւելի դպրոցասէր եւ եկեղեցասէր են. բայց իրենք իշխանութիւն չունենալով՝ լռութիւն պահելու ստիպուած են :

Կիներն շատ չեն սիրեր պտոյտն այն պատճառաւ, որ պտըտելու տեղ չկայ :

Օդը շատ աղէկ է գեղին բարձունքին վրայ, իսկ ծովեզերքի օդն աղէկ չէ: Օդին ազդեցութեան շնորհիւն է, որ վերի կողմին ազգայիններն աւելի աղէկ են քան վարիններն, եւ եթէ վերիններն վար իջնան կամ վարիններն վեր ելնեն՝ օդափոխութեամբ իրենց բնատրոփիւնն ալ կփոխեն :